

**ERASMUS+ BOOST ծրագրի շրջանակներում Երևանի պետական կոնսերվատորիայում կայացած միջազգային կոնֆերանս (2018թ. սեպտեմբերի 27)**

ERASMUS+ BOOST ծրագրի շրջանակներում Երևանի պետական կոնսերվատորիայում 2018թ. -ի սեպտեմբերի 27-ին կայացավ «Բարձրագույն կրթության միջազգայնացման հեռանկարները» խորագրով միջազգային կոնֆերանս:

Կոնֆերանսի բացմանը ողջույնի խոսքով հանդես եկան կոնսերվատորիայի ռեկտոր Շահեն Շահինյանը, ՀՀ Կրթության և գիտության փոխնախարար Հովհաննես Հովհաննիսյանը, ինչպես նաև ERASMUS+ ազգային գրասենյակի ծրագրերի համակարգող Լանա Կառլովան:

Կոնֆերանսի ընթացքում ներկայացվեցին միջազգային և հայաստանյան փորձը բարձրագույն կրթության միջազգայնացման գործընթացի ուղղությամբ, միջազգայնացման ռազմավարական ծրագրերի մշակման հիմունքները, բուհերի ու երկրների մարքեթինգային հարցեր, ինչպես նաև ակադեմիական շարժունության ուղղությամբ հարցեր:

Մանրամասների համար՝

[https://www.facebook.com/ErasmusPlusBOOST/videos/313031455914465/?epa=SEARCH\\_BOX](https://www.facebook.com/ErasmusPlusBOOST/videos/313031455914465/?epa=SEARCH_BOX)

[Conference agenda](#)

